*Կալիֆորնիայի Պաշտպանության և Փաստաբանության համակարգ*

# Հաշմանդամության խտրականության վերաբերող ամփոփաթերթ. Զբաղվածություն

*Փետրվար, 2018թ., հրատ. #F109.10 - Armenian*

Հաշմանդամ ամերիկացիների մասին օրենքի 1-ին հոդվածն (ADA, Americans with Disabilities Act) արգելում է հաշմանդամության վրա հիմնված խտրականությունը, որը դրսևորվում է մասնավոր գործատուների կողմից: Խտրականությունը ներառում է անհավասար վերաբերմունք, վրեժ և հետապնդում աշխատակիցների և աշխատանքի համար դիմում ներկայացրած հաշմանդամ անձանց հանդեպ: Այն նաև ներառում է գործատուի գործելակերպերի, քաղաքականությունների և աշխատավայրի պայմանների պատշաճ փոփոխություններ կատարելու թերացումը՝ աշխատակցի կամ դիմորդի հաշմանդամությանը հարմարեցնելու նպատակով: Էջ երեքում տրամադրված է նամակի նմուշ՝ պատշաճ հարմարեցումներ խնդրելու համար, իսկ էջ չորսում՝ աջակցող նամակի նմուշ բուժող մասնագետի կողմից:

Կալիֆորնիայի արդար աշխատանքի և կացարանի մասին օրենքը (FEHA, Fair Employment and Housing Act) նման պաշտպանության միջոցներ է տրամադրում: ADA-ի որևէ խախտում նաև նահանգային օրենքի խախտում է համարվում: Սակայն, որոշ հանգամանքներում նահանգային օրենքը կարող է պաշտպանության ավելի

բարձր մակարդակ տրամադրել, քան դաշնային օրենքն է տրամադրում: Օրինակ՝ ADA-ն վերաբերում է այն գործատուներին, ովքեր 15 կամ ավելի աշխատակիցներ ունեն, իսկ FEHA-ն վերաբերում է այն գործատուներին, ովքեր հինգ կամ ավելի աշխատակիցներ ունեն:

Ստորև տրամադրված են մի քանի առցանց ռեսուրսներ՝ աշխատանքում հաշմանդամության խտրականության և պատշաճ հարմարեցումների մասին հավելյալ տեղեկություններ ստանալու համար.

- ԱՄՆ Հավասար հնարավորությունների հանձնաժողովի կայք http://www.eeoc.gov/laws/types/disability.cfm

- Կալիֆորնիայի արդար աշխատանքի և կացարանի մասին օրենքի կայք՝ http://www.dfeh.ca.gov/Employment

- Աշխատանքի հարմարեցումների ցանցի կայքէջը՝ աշխատանքում պատշաճ հարմարեցումների մասին տեղեկություններ ստանալու համար՝ http://askjan.org

- Իրավաբանական աջակցություն աշխատանքում կայքէջը՝ ռեսուրսների և իրավաբանական ներկայացուցչության համար՝ www.legalaidatwork.org.

## Հաշմանդամ անձանց շահերի ինքնապաշտպանություն

Եթե Դուք կարծում եք, որ խտրականության եք ենթարկվել, կարող եք վարչական բողոք ներկայացնել (կամ «տուգանք») Հավասար աշխատանքային հնարավորությունների դաշնային հանձնախմբին (EEOC, Equal Employment Opportunity Commission) կամ Կալիֆորնիայի արդար աշխատանքի և կացարանների վարչությանը (DFEH, Department of Fair Employment and Housing): Դուք պետք է վարչական գանգատ ներկայացնեք և EEOC-ից կամ DFEH-ից «նամակի դեմ դատական գործ հարուցելու իրավունք» ձեռք բերեք՝ նախքան կկարողանաք դաշնային կամ նահանգային դատարանում դատական վարույթ սկսել հաշմանդամության խտրականության մասին: Գանգատները կարող են ներկայացվել EEOC-ին՝ խտրականության դրսևորման ամսաթվից սկսած 300 օրվա ընթացքում, իսկ

DFEH-ին՝ խտրականության դրսևորման ամսաթվից սկսած մեկ տարվա ընթացքում:

EEOC-ին կամ DFEH-ին մեղադրանք ներկայացնելը բացատրված են EEOC-ի և DFEH-ի կայքերում՝ [https://www.eeoc.gov/employees/charge.cfm](https://www.eeoc.gov/employees/charge.cfm) and [https://www.dfeh.ca.gov/filing-a-complaint-online/](https://www.dfeh.ca.gov/filing-a-complaint-online/)

EEOC-ն և DFEH-ն կիսում են աշխատանքում խտրականության գանգատների քննության պատասխանատվությունը: Եթե DFEH-ն ընդունի հետաքննության Ձեր գանգատը, և Ձեր գանգատը բավարարի EEOC-ին փաստաթղթերը ներկայացնելու պահանջները, ապա DFEH-ն Ձեր գանգատը կփոխանցի EEOC-ին: Եթե Դուք դիմում ներկայացնեք EEOC-ին, այն ինքնաբերաբար գանգատի կրկնօրինակը կփոխանցի DFEH-ին:

## Դատավարություն

Օրենքի խախտման վերոնշյալ քննարկված դեպքերը նաև կարող են քննվել մասնավոր դատական գործի միջոցով: Խնդրում ենք իրազեկ լինել, որ սահմանափակումներին վերաբերող օրենսդրական ակտերը սահմանափակում են դատական գործ հարուցելու ժամանակահատվածը: Դատական գործ հարուցելու վերջնաժամկետը կարող է 90 օրից կարճ լինել՝ սկսած «նամակի դեմ դատական գործ հարուցելու իրավունքի» ամսաթվից, որն առաջանում է EEOC-ի վարչական գանգատի գործընթացից: Եթե Դուք որոշեք դատական գործ հարուցել, ապա պետք է այս վերջնաժամկետները քննարկեք անձնական փաստաբանի հետ:

Եթե Դուք 10000 ԱՄՆ դոլարից ավելի քիչ եք պահանջում վնասի դիմաց, մեկ այլ տարբերակ է Փոքր բողոքների դատարանում խտրականության մասին գործ հարուցելը: Սահմանափակումներին վերաբերող օրենսդրական ակտերը, որոնք քննարկվեցին վերևում, կիրառելի են: Եթե Դուք դիմեք փոքր բողոքների դատարան, ապա չեք կարողանա օգտվել փաստաբանի ծառայություններից: «Disability Rights California»-ի հրապարակման մի հղման մեջ բացատրվում է խտրականության դեպքերի համար փոքր

բողոքների դատարանից օգտվելու գործընթացը, որը կարելի է գտնել` http://www.disabilityrightsca.org/pubs/520601.pdfկայքէջում: Դուք նաև կարող եք տեղեկություններ գտնել փոքր բողոքների դատարանների մասին Կալիֆորնիայի դատարանների կայքէջում` http://www.courts.ca.gov/1062.htm:

## Պատշաճ հարմարություններ խնդրելու նամակի նմուշ

[Ամսաթիվ]

Հարգելի [Գործատու]

Ես գրում եմ Ձեզ` իմ հաշմանդամության/հաշմանդամությունների համար պատշաճ հարմարություն[ներ] խնդրելու: Ես [պետական կազմակերպությունում] [աշխատակից եմ/դիմում եմ պաշտոնի համար]: Իմ հաշմանդամության պատճառով ես հետևյալ հարմարեցումների կարիքն ունեմ` [նշել հարմարեցումները]: Իմ [բժիշկը/հոգեբույժը/հոգեբանը/թերապևտը/սոցիալական աշխատողը/աշխատանքային թերապևտը/այլ անձ (նկարագրել)] համարում է, որ այս հարմարեցումները/փոփոխությունները անհրաժեշտ են իմ հաշմանդամության պատճառով: Խնդրում եմ նայել կից նամակի ձևաթուղթը [բժշկի կամ մասնագետի անունը]-ից:

Դաշնային և նահանգային օրենքը պահանջում է, որ գործատուները հարմարեցումներ տրամադրեն այն աշխատակիցներին և դիմորդներին, ովքեր հաշմանդամություն ունեն: Խնդրում եմ այս խնդրանքին պատասխանել մինչև [ամսաթիվ]: Խնդրում եմ դիմել ինձ [Ձեր հեռախոսահամարը և/կամ էլ.փոստի հասցեն]

միջոցով, եթե Դուք որևէ հարց ունեք:
Շնորհակալություն:

Հարգանքով՝

[Ձեր անունը]
[Ձեր հասցեն]

# Աջակցող նամակի նմուշ բուժող մասնագետի կողմից

[Ամսաթիվ]

Հարգելի [պետական կազմակերպություն],

Ես [անուն]-ի
[բժիշկը/հոգեբույժը/հոգեբանը/թերապևտը/սոցիալական աշխատողը/աշխատանքային թերապևտն] եմ և ծանոթ եմ նրա առողջական խնդրին: [Նա] հաշմանդամություն ունի, ինչը որոշակի ֆունկցիոնալ սահմանափակումներ է ստեղծում: Այս սահմանափակումները ներառում են [նշեք ֆունկցիոնալ սահմանափակումները, որոնք հայցված հարմարեցումներն են պահանջում]:

[Հայցված հարմարեցումն] անհրաժեշտ է [անուն]-ի համար [աշխատելու/դիմելու աշխատանքի] [գործատու]-ում: [Նկարագրեք, թե հարմարեցումն ինչպես կօգնի կամ կաջակցի անհատին]:

Շնորհակալություն այս պատշաճ հարմարեցումը [անուն]-ին տրամադրելու համար:

Հարգանքով՝
[Անուն և պաշտոն]

Վերջին անգամ թարմացվել է՝ 2018թ. հունվարի 29-ին:

---

Մենք ցանկանում ենք լսել Ձեզ: Խնդրում ենք լրացնել մեր հրապարակումներին վերաբերող հետևյալ հարցումը և մեզ տեղեկացնել, թե ինչպես ենք մենք աշխատում: [Լրացնել հարցումը]
Իրավաբանական աջակցության համար զանգահարեք 800-776-5746 կամ լրացրեք աջակցության խնդրանքի ձևաթուղթ: Մնացած բոլոր նպատակներով զանգահարեք՝ 916-504-5800 հեռախոսահամարով (Հյուսիսային Կալիֆորնիա), 213-213-8000 (հարավային Կալիֆորնիա):
Disability Rights California-ն ֆինանսավորվում է տարբեր աղբյուրներից, հովանավորների ամբողջական ցանկի համար այցելեք՝ http://www.disabilityrightsca.org/Documents/ListofGrantsAndContracts.html